ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

2. Սահմանվել են էջերի հետևյալ չափանիշները և պահանջները.

1) Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Հայերեն ներկայացված հոդվածը պետք է շարադրել «GHEA Grapalat», իսկ ռուսերեն և անգլերեն ներկայացվող հոդվածները՝ «Times New Roman» տառատեսակով: Տառաչափը՝ 11, տողերի հեռավորությունը՝ 1.2, ձախից՝ 2 սմ, վերևից 2 սմ, աջից 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ:

2) Առաջին էջի վերին տողի մեջտեղում գլխատառերով և ստվերապատված, հոդվածի տեքստի լեզվով նշվում են՝ հանդեսի լրիվ անվանումը, տարեթիվը և հերթական համարը, փակագծում նաև ընդհանուր համարը (ամբողջ տողը՝ հաստ **(bold),** 11 տառաչափով):

3) Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հեղինակի (ների) **Ա.Հ. Ազգանունը (ները)** (փոքրատառ, **bold,** 11 տառաչափով): Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հոդվածի վերնագիրը (գլխատառերով, **bold,** 12 տառաչափով), իսկ մեկ տող ներքև, հոդվածի տեքստի լեզվով՝ համառոտագիրը (аннотация), (որի մեջ պետք է ձևակերպվի հոդվածի նպատակը, արդյունքները և հիմնավորվի կատարված աշխատանքների անհրաժեշտությունը), 5-8 **առանցքային բառերով** (բոլորը՝ մինչև 10 տող ծավալով, շեղատառերով (*Italic*), 10 տառաչափով): Համառոտագրից մեկ տող ներքև, 11 տառաչափով տրվում է հոդվածի հիմնական տեքստը:

4) Պարբերությունները սկսել նոր տողից՝ 10 մմ ներսից:

5) Նկարները, գծանկարները և աղյուսակները տեղադրել տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում, պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում: Անվանումը և բացատրությունները տեղակայել նկարների տակը և աղյուսակների վրա (*Italic*, ***bold*** 9 տառաչափով):

6) Հոդվածում կարող են ընդգրկվել գունավոր նկարներ, գծանկարներ և այլ վիզուալ նյութեր:

7) Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տալ Microsoft Equation, Italic, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացնել առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները, նաև համարակալել նույն տողի աջ անկյունում՝ (փակագծերի մեջ):

8) Հոդվածում օգտագործվող գրական աղբյուրները պետք է ունենան օգտագործման հերթականությանը կամ այբբենական դասավորությանը (ըստ լեզուների) համապատասխան համարակալում և տեքստում նշել՝ [1], [2],...տեսքով:

9) Հոդվածի վերջնամասից երկու տող ներքև, մեջտեղում նշվում է **Գրականություն** արտահայտությունը (փոքրատառ, **bold,** 11 տառաչափով) և ըստ ընդունված ստանդարտի, 10 տառաչափով տրվում է գրականության ցանկը, որում հեղինակի (ների) **Ազգանունը Ա.Հ. - ն** կամ **առաջին բառը ձևավորվում է bold,** 10 տառաչափով: Ցանկալի է գրականության ցանկում ընդգրկել մինչև 10 հրատարակում:

10) Գրականությունից հետո, երկու տող ներքև հոդվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով նույն ձևով կրկնվում է հոդվածի գլխամասը՝ հեղինակի (ների) **Ա.Հ. Ազգանունը (ները), հոդվածի վերնագիրը** և համառոտագիրը:

11) Մեկ տող ներքև տրվում են հոդվածի հեղինակի (ների) Ազգանունը, Անունը, Հայրանունը, գիտ. աստիճանը, գիտ. կոչումը, կազմակերպության համառոտ անվանումը (փակագծերում) և հեռախոսների համարները:

12) Մեկ տող ներքև նշել հոդվածի ներկայացման և գրախոսման ամսաթիվը, ամիսը և տարին:

3. Վերոնշյալ պահանջները բավարարելուց հետո Գիտական հանդեսի պատասխանատու քարտուղարին ներկայացնել համապատասխան դրական կարծիքը և հոդվածի էլեկտրոնային տարբերակը:

4. Չի թույլատրվում ներկայացնել նախկինում հրատարակված կամ տպագրության համար այլ հանդեսներ ուղարկած հոդվածներ:

5. Ներկայացված նյութերը սույն կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չեն ընդունվում: